



Սյունյաց Երկիր

ԾԱՒՊԻՉ՝ ԴՒՄ, 22 ԵՐԻՍՏՈՒՆ 2016Թ.
№ 33 (409)

www.syuniacyerkir.am

**Մեր
ժամանակը...**
Արթուր Սարգսյան



ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆ.
«Եթե հիմնախնդիրների մեծ մասին տեղյակ չլինեի, Սիսիանը ղեկավարելու հավակնություն չէի ունենա»

Նարգելի հայրենակիցներ Սիսիանի ֆաղափառեցի դաշտում իմ թեկնածության առաջադրման նախաձեռնությունը դասկանում է Սիսիանի երիտասարդներին: Այո, եկել է մեր ժամանակը՝ Սիսիան համայնքի ղեկավարի եւ ավագանու հոկտեմբերի 2-ին կայանալիք ընտրությունների արդյունքում սահմանելու ֆաղափ ղեկավարման դասասխանակություն:
Քաղաքացիական լինելով ֆաղափ բոլոր խնդիրներին՝ համոզված եմ, որ ունենալով սիսիանցիների վստահությունն իմ նկատմամբ եւ հավաստի Սիսիանի աղագայի հանդեպ, ի գորու եմ համախմբել սիսիանցիների ջանքեր եւ կարող բոլոր ուժերի հետ միասին առաջիկա հինգ տարվա ընթացքում լրջորեն բարելավել յուրաքանչյուր սիսիանցու կյանք:

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆ

**Նարգազույց
հեղինակությունների արժանի**

Սիսիանի համայնքապետի ընտրությունն այս անգամ եւս թե՛ է լինելու: Համայնքի ղեկավարի թեկնածու է առաջադրվել Արթուր Սարգսյանը, ով քաղաքական ասպարեզ մտնելու հայտ է ներկայացրել: Հայտնի գերդաստանի գավակ է, հայրը՝ Լավրենտ Սարգսյանը, ինը տարի ղեկավարել է Սիսիանի քաղաքապետարանը: Նաեւ համակիրների մեծ բանակ ունի: Մրցակիցը Սիսիանի գործող քաղաքապետ Աղասի Հակոբջանյանն է, ով նույնպես Սիսիանում հեղինակություն է վայելում: «Լուսավոր Հայաստան» կուսակցությունն էլ իր թեկնածուն է առաջադրել՝ լրագրող Սրբուհի Գրիգորյան: Մի խոսքով՝ Սիսիանում լարված ճիգնադրական մթնոլորտ է, եւ ընտրապայքարի թե՛ օրերին հանդիպեցինք համայնքի ղեկավարի թեկնածու Արթուր Սարգսյանի հետ:

- Արթուր Սարգսյանի ցանկությունը՝ մտնելու քաղաքական դաշտ եւ ստանձնելու Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնը, նոր երեւույթ է իրադարձություն է, ինչը՝ վ պայմանավորված ձեր այդ մտադրությունը, ձգտումը, հավակնությունը: Ի դեպ, դուք կարեւոր պաշտոն էիք զբաղեցնում ՀՀ պետականուսուների կոմիտեում, բայց ահա հայտ եք ներկայացնում ղեկավարելու Սիսիան համայնքն առաջիկա հինգ տարում:
- Սիսիանի քաղաքապետի պաշտոնում առաջադրեցի իմ թեկնածությունը՝ կարեւորելով ծննդավայրիս առջեւ ծառայած դժվարին խնդիրները, դրանց հրատապ լուծման անհրաժեշտությունը եւ Սիսիանի երիտասարդության ու բնակչության ծանրակշիռ մեծամասնության պահանջը: Մինչ այդ զբաղեցրել եմ հանրապետության պետականուսուների կոմիտեի նախաքաղաքացիական հսկողության վարչության Սյունիքի տարածաշրջանային բաժնի պետի պաշտոնը: Վայելելով ղեկավարության հարգանքը եւ վստահությունը՝ ինձ առաջադրվեց մնալ այդ պաշտոնին, բայց, նորից եմ կրկնում,

տեսնելով իմ հայրենի քաղաքում կուտակված հիմնախնդիրները, անսալով մանավանդ երիտասարդության հորդոր-խնդրանքին, օգոստոսի 29-ին իմ դիմումի համաձայն ազատվեցի աշխատանքից եւ հաջորդ օրն իսկ փաստաթղթերս ներկայացրի ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ առաջադրվելով Սիսիանի համայնքապետի թեկնածու:

- Պարոն Սարգսյան, այն տպավորությունն է ստեղծվում, որ Ձեր առաջադրվելու պարագայում մեծ դեր է խաղացել Սիսիանի հանրային պահանջը, հատկապես երիտասարդության պահանջը:

- Անշուշտ, այդպես է: Տեղյակ եմ Սիսիանի հիմնախնդիրներին, որոնք շատ-շատ են: Այնպես չէ, որ համայնքապետի աթոռն ինձ համար մեծ արժեք է ունեցել, առաջադրվելը՝ գերմպատակ: Պարզապես գիտակցել եմ, թե համայնքային ինչ խնդիրներ կան լուծելու: Մարդ կարող է շատ ճանաչված, հարգանքով մարդու որդի լինի, բայց եթե իրեն վստահված գործը չանի, ամեն ինչը կգրոյաճա: Դժվար էր որոշում կայացնելը, բայց գնացի այդ քայ-

լին՝ գիտակցելով, որ իմ թեկնածու կանգնած է լուրջ թիմ, կանգնած են մարդիկ, ովքեր վաղը, մյուս օրը պատրաստ են իմ անվան, արժանապատվության համար վեր կանգնել անձնականից, նաեւ նեցուկ լինել համայնքի առջեւ ծառայած խնդիրների լուծմանը:

- Նախնական փոքրիկ գրույցում պայմանավորվեցինք, որ հարցազրույցը պիտի լինի առավելագույնս անկեղծ ու անմիջական: Նախընտրական այս փուլում մի շատ կարեւոր հանգամանք, իրողություն, որ քննարկվում է, հետեւյալն է՝ Արթուր Սարգսյանը Լավրենտ Սարգսյանի որդին է, եւ այս լույսի ներքո երկու բան են ասում. իբր քաղաքապետի պաշտոնն ուզում են դարձնել ժառանգական, երկրորդ՝ ի՞նչ է արել Լավրենտ Սարգսյանը, որ հիմա էլ որդին է քաղաքապետ դառնալու հավակնություն դրսեւորում: Այ, կուզենայինք, որ ներկայացնեիք Լավրենտ Սարգսյան մարդուն եւ գործին՝ Սիսիանի քաղաքացու դիրքերից:

- Հասարակության մեջ յուրաքանչյուր

ցույցի անդամ:

– Ոչ:
– Շատ լավ, հիմա այսպիսի մի հարց է շրջանառվում Սիսիանին առնչվող: Հայաստանում իշխող վարչախումբը միշտ ունեցել է իր թեկնածուն՝ հատկապես նախկին շրջակայքում եւ խոշոր գյուղերում: Այսօր իշխող վարչախումբը զարմանալիորեն Սիսիանում թեկնածու չունի: Դա ինչպե՞ս էր գնահատում: Երկու տեսակետ կարող է լինել. մեկ՝ թող ժողովուրդն ուն ուզում է՝ ընտրի, ով հարթի, իսկապես մեր ընտրյալն է, երկրորդ՝ միգուցե հանրապետականը չի՞ ունեցել այդ թեկնածուն, որի վրա վստահորեն հենվի եւ դուրս գա մրցապայքարի: Այնուամենայնիվ, ամբողջ Հայաստանի մասշտաբով շատ քիչ բնակավայրեր կան, որտեղ իշխող վարչախումբը կամ քաղաքական ուժն իր թեկնածուն չի առաջադրել:

– Երիտմասնակցներն, թե իշխող վարչախումբը որ համայնքում թեկնածու ունի, որում՝ ոչ: Ինքս ոչ մի կուսակցության չեմ անդամակցում, բայց, իմ պաշտոնի բերումով, միշտ եղել եմ իշխանության հետ, տարբեր ընտրությունների ժամանակ եղել եմ իշխանությունների կողքին, բնականաբար, ընդդիմադիր դաշտում չեմ եղել: Հիմա իշխանություններն ուն կսատարեն՝ չգիտեմ, ես հանդես եմ գալիս պետության դիրքերից: Այսպես ձեռակերպեմ իրողությունը, հանդես եմ գալիս որպես անկուսակցական եւ պետականամետ: Այնուամենայնիվ, ողջունում եմ ժողովրդի արդար ընտրությունը:

– Կուլիսներում խոսում են, որ այս ընտրությունից հետո Սիսիանին եւ Կապանին սպասվում է համայնքների խոշորացում, ընդ որում՝ ոչ թե Գորիսի, այլ Մեղրու տարբերակով, այսինքն՝ երբեմնի ամբողջ վարչական շրջանը մեկ համայնքի մեջ ներառելով: Նախ, որպես համայնքի ղեկավարի թեկնածու, ինչպե՞ս էր գնահատում համայնքների խոշորացման ներկայիս կուրսը, երկրորդ՝ ինչպե՞ս էր գործընթացը պատկերացնում Սիսիանի պարագայում, քանզի դա ունի եւ առավելություններ, եւ թերություններ:

– Երիտմասնակցները քննարկման փուլում էր, չեմ մտածել ավելի խոշոր համայնքի ղեկավար լինելու մասին: Իմ որոշումը կայացրած եմ եղել այսօրվա Սիսիան քաղաքի ղեկավար ընտրվելու համար: Նման խոսակցություններ (Սիսիանի խոշորացման առումով) լսել եմ, բայց չեմ կարելորել: Նպատակս եղել է Սիսիանի համայնքապետի թեկնածու առաջադրվելը, ինչն համար եմ հրաժարվել եմ իմ պաշտոնից, ինչին շատերը չեն հավատալ: Իմ ցանկությունն ու ձգտումը Սիսիանին ազդվորեն ծառայելն է: Ինչ վերաբերում է համայնքների խոշորացմանը, յուրաքանչյուր լուրջ փոփոխություն իր հիմնավորումն ունի: Եթե խոշորացման մասին անձնական կարծիքս արտահայտեմ, կլինեն այնպիսիք, որ կասեն՝ ըիր, ուզում է մեծ պաշտոնի տեր դառնալ: Երբ համայնքների խոշորացումն արդեն իրական կլինի, բնականաբար, իմ ծրագիրը կներկայացնեն եւ դիրքորոշումս կարտահայտեն:

– Սիսիանում, այնուամենայնիվ, նոր իրավիճակ է ստեղծվել. ՏԻՄ ընտրություններին միշտ եղել է երկու բեռն, առաջին փուլում գուցե երեք-չորս, բայց, այնուամենայնիվ, վերջում երկու թեկնածու է մնացել: Հայաստանի քաղաքական ասպարեզ մտած «Լուսավոր Հայաստան» կուսակցությունն է իր թեկնածուն առաջադրել Սիսիանում: Իսկապե՞ս Սիսիանում քաղաքական վիճակը փոխվել է, ուժերի հարաբերակցությունը փոխվել է, եւ այդ նոր քաղաքական ուժը պահանջված է:

– Իմ կարծիքով՝ յուրաքանչյուր քաղաքական ուժ իր խնդիրն է լուծում: Ով մտածում է Սիսիանի ասպարեզի մասին՝ իր վստահության քվե կտա քաղաքական ասպարեզ մտած եւ Սիսիանի հիմնախնդիրները լուծելու հայտ ներկայացրած նոր ու երիտասարդ ուժերին: Իսկ նրանց, ում բավարարում է անցած ութ տարում քաղաքում տիրող անմխիթար վիճակը, դատարաններում չարչրկված ու հեղինակազրկված Սիսիան անվանումը, իրենց քվե կտան այլ թեկնածուի: Իսկ այն ընտրողները, ովքեր երկուսիս չեն



Արթուր Արթուրյան,
Բն իմ թեկնածու չեմ գործի,
այսպես ասում են շրջանում,
միայն հայրենի երկրի
փեսայն եմ ես հայրենիս
եւ ինչպե՞ս եմ համայնք
-յունն ու հեռավորս
-նչ... Այսօր իմ մտքս
կարծիքս առաջնորդ է
Հայաստանի փրկիչս
հայրս...
Հարգանքներով
Քն Համա Արթուրյան
20-1-88



նախընտրում, դժգոհ եմ մեզնից, բնականաբար, կքվեարկեն երրորդ թեկնածուի օգտին: Բանը միայն կուսակցության անվանումը եւ հեղինակությունը չէ, ընտրողը, նախեւառաջ, ծանրութեթեւ է անում թեկնածուի անցած ուղին, նրա վաստակը, նրա հնարավորությունները եւ քաղաքի ու քաղաքացու ունեղեպ հոգատարության չափը:

– Ինչպե՞ս էր վերաբերվում իրապարակայնությանը, թափանցիկությանը, քննադատությանը: Դա մեր իրականության մեջ լուրջ հարց է, որովհետեւ իշխանավորների մեծ մասն այդ ամենը ցավով է ընդունում: Մինչդեռ հանրային շահը պահանջում է, որ իշխանավորի գործունեությունը լինի ուշադրության կենտրոնում:

– Կողմ եմ իրապարակայնությանը եւ բացախտությանը: Պատրաստ եմ միշտ պատասխանել լրատվամիջոցներին հուզող հարցերին: Բայց թող ԶԼՄ-ներում արտացոլվի ճշմարիտը, եթե պախարակելի քայլ եմ կատարել, թող քննադատեն, իսկ այն ամենը, ինչ ինձ հետ առնչություն չունի, թող հանրիավի չկապեն իմ անվանը: Վերջերս գրել էին, թե Արթուր Արթուրյանը Սիսիանում խաղատում է բացել: Եթե այդպես գրողներն իրենց մի քիչ ներդրում տային եւ բացեին օրենսգիրքը, կհմանային, որ լավագույն ցանկության դեպքում Սիսիանում խաղատում բացելու հնարավորություն չունեմ, քանզի օրենսգրքով նման թույլտվություն ունեն Մեղրի, Ծաղկաձոր, Դիլիջան, Սեւան քաղաքները: Ապատեղեկատվությունը, կարծում եմ, բոլորի մեջ ցավ է հարուցում: Բայց եթե որեւէ սխալ կատարեմ, թող գրեն, դրանից չեմ նեղվի եւ առավելապես թշնամաբար չեմ տրամադրվի գրողի հանդեպ: Իսկ որն իրականությանը չի համապար-

տասխանում, թող չգրեն, ավելորդ կրքեր բորբոքեն:

– Համայնք մտնելիս՝ Սիսիանը բարձունքից անհրապույր տպավորություն է թողնում: Այցելում առաջին բացասական տպավորությունն է ստանում Սիսիանից: Ի՞նչ պիտի արվի, որ Սիսիանը ընդհանրապես գյուղաքաղաքի չնմանվի: Խոսքը քաղաքի մաքրությանը եւ վերաբերում ընդհանրապես:

– Ընդունում եմ դիտողությունը: Յուրաքանչյուր քաղաք ունի մաքուր պահելու իր մշակված ձեւը, այնպես չէ, որ Սիսիանի համար էլ նոր մոդել պիտի հորինել: Մաքուր քաղաք ունենալու համար ընդամենը պիտի մաքրել, հետեւել դրա պահպանմանը: Ջրցան մեքենան ընտրությունից ընտրություն է աշխատում: Իմ պաշտոնավարության դեպքում մեքենան ամեն օր է աշխատելու: Պարզ մի օրինակ, տունն ամեն օր մաքրելու դեպքում հաճելի ու մաքուր տեսք է ունենում: Երեք շաբաթ չմաքրելու դեպքում այդ տունը մտնել չի լինում:

– Սիսիանը ոմանք համարում են գյուղատնտեսական տարածաշրջան, բայց շատերիս համար Հայաստանի մասշտաբով մեր հոգեւոր-մշակութային կենտրոններից մեկն է, գործիմասկ, հինավուրց աստղադիտարանը, Սիսիանի մեծերը՝ Հովհան Ռոտունցին, Նիկողայոս Աղոնցը, Համո Սահյանը, Մորուս Հասարայանը, երեւելի այլ դեմքեր: Ի՞նչ էք մտածում Սիսիանի հոգեւոր-մշակութային կյանքն աշխուժացնելու ուղղությամբ: Այս հարցը պատահական չի տրվում, քանզի ձեզ կարելի է համարել տեխնոկրատ, ով երբեմն մշակութային ոլորտից հեռու է լինում:

– Կարեցածիս չափով օգնել եմ սիսիանցիներին՝ եւ ոչ միայն: Կոնկրետ մի

օրինակ բերեմ. օժանդակել եմ եղեգնածորի առաջնորդահատ եկեղեցուն կից հայտնաբերված Սրբոց Վարդանանց եկեղեցու պեղման եւ վերականգնման աշխատանքներին, այդտեղ իմ միջոցներով տեղադրվել է հիշատակի խաչքար: Այս ամենի համար արժանացել եմ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հայրապետական օրհնության գրին: Բացի այդ Այունյաց թեմի առաջնորդական տեղապահին խոսք եմ տվել, որ ընտրություններից հետո ընկերներս եւ իմ միջոցներով Ռոտունավանքի նորոգումը շարունակվելու է: Դե իսկ Համո Սահյանի եւ մեր ընտանիքի բարեկամության մասին բոլորը գիտեն...

– Ո՞րն է Ձեր կարգախոսը, որով մտնում էք քաղաքական դաշտ:

– ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ... սա տարրորդական հասկացություն է, այսինքն՝ եկել է մեր ժամանակը, եկել է երիտասարդության ժամանակը, նոր մտածելակերպի ժամանակը, երբ արդեն մարդիկ մտածում են, որ ինչ-որ բան կարելի է փոխել Սիսիանի համար:

– Որքանով իմացանք, ձեր թեկնածու առաջադրվելը ողջունում է Սիսիանի երիտասարդությունը: Կուզեի՞ք իմանալ, թե էլ ովքեր են պատրաստվում վստահության քվե տալ համայնքապետի թեկնածու Արթուր Արթուրյանին:

– Բոլոր այն մարդիկ, ովքեր մտահոգ են Սիսիանի վաղվա օրով, որոնց հուզում են համայնքի առջև ծառայած հիմնախնդիրները:

– Ձեր խոսքը սիսիանցիներին:

– Ես շատ եմ սիրում իմ հողն ու ջուրը, իմ սիսիանցիներին, սիսիանցիները խելացի եւ պատվախնդիր մարդիկ են, բոլոր ընտրություններից ցույց են տվել իրենց դեմքը, իրենց սկզբունքայնությունը: Ընդհանրապես կոչ եմ անում սիսիանցիներին՝ կատարել արդար ու ճիշտ ընտրություն: Սրտով եւ խղճի մտքով: Ով արժանի է, թող նրան էլ տան իրենց քվե:

– Եվ այս հարցը՝ որպես վերջաբան: Ո՞րն է լինելու Ձեր առաջին քայլն ընտրվելու դեպքում եւ չընտրվելու դեպքում:

– Ընտրվելու դեպքում՝ անմիջապես լծվել նախընտրական խոստումների կատարմանը, չընտրվել չեմ պատկերացնում, ուստի հարցարման այդ մասին չեմ պատասխանում, որովհետեւ չընտրվել չկա:

.....
Թ.Պ. Հարցազրույցը տեղի է ունեցել 2016թ. սեպտեմբերի 10-ին: Դրանից մի քանի օր անց Այունյաց մարզպետ Սուրեն Խաչատրյանը Սիսիանում հայտարարեց, որ Սիսիան համայնքի ղեկավարի առաջիկա ընտրություններում Այունյացի մարզպետարանի եւ ՀՀ տարածքային կառույցի նախընտրելի թեկնածուն Արթուր Արթուրյանն է:

Վահագն Կարամյան

Մաս կտանք

Սիսիանը արոտավետ սարեր ունի ու ցորենաշատ լեռնահովիտներ: Երկնքի համը դաշտերին բերող ջրեր ունի ու կիրճերի մամռանախոտը երկինք տանող արահետներ:

Լեռների գագաթները յոթերորդ երկնքի մեջ են, խարխիսները՝ վիհավոր անտակ կիրճերում:

Տարվա բոլոր եղանակները ապրում են իրար հարեւանությամբ: Օգոստոսին (երբ մինչեւ անգամ տարին երաշտ է) կարող ես լեռնագագաթներից դեղապետի ծյուն բերել, հունվարին մամուռնուկ ու կակաչ քաղել կիրճերի հատակին:

Ցից քարեր բնակավայրը, որն առընթեր է շրջկենտրոնին՝ Սիսիան քաղաքին, 4-6 հազար տարվա պատմություն ունի: Ամեն անգամ, երբ այդ բնակավայրն են մտնում, ինձ թվում է, թե տեսնում եմ նրա բնակիչներին, վիթխարի ժայռաբեկորները ծորից ծորաբերան հանող շինարարներին, տեսնում եմ նրանց, լսում նրանց ձայները, խոսում նրանց հետ մախնական մի լեզվով եւ դառնում նրանց ժամանակակիցը: Երբ դուրս եմ գալիս այնտեղից, ինձ զգում եմ ոչ թե յոթանասուն, այլ յոթ հազար տարեկան: Եվ նրանք էլ, այդ քաղաքի բնակիչներն ու շինա-

րարները հետս գալիս մտնում են այսօրվա Սիսիան քաղաքի քարտաշների, որմնադիրների եւ ճարտարապետների կերպարների մեջ եւ դառնում են մեր ժամանակակիցները:

Պատմական հուշարձանները շատ են Սիսիանում: Ժայռերի գանգախոռոչներում ծվարած բերդեր, բլուրների թամբին նստած վանքեր, ժողովրդյան համճարի ուրիշ վկաներ... Եվ Սիսիանն էլ ինձ բնաշխարհն է, ինձ ծննդավայրը. ամեն քարը իմ հոգու մի բեկորն է, ամեն պտղունց հողը՝ իմ սրտի մի մասունքը: Բոլորն իմ մեջ են, բոլորի մեջ ես եմ...

Եվ, սակայն, ամենից շատ սիրում եմ Սիսիանի մարդկանց, սիսիանցիներին, մարդիկ, որ օգտվել գիտեն ժամանակակից քաղաքակրթության բոլոր բարիքներից եւ պահպանել գիտեն մախնիների լավագույն սովորույթները: Սիրում եմ նրանց աշխատասիրությունը, տիրջական զգացումը հողի նկատմամբ, համեստությունը, ամոթխածությունը, պարզամտությունը:

Առուկուլից, առուժախից, առուփախից փախած այդ մարդիկ եթե գլխիդ սպիտակ մազ են տեսել, ոտքի կկանգնեն, եթե նստած են, եթե կանգնած են՝

գլխարկները կհանեն: Դիրքը այստեղ դեր չունի, որոշողը տարիքն է: Նրանք հացի պատառը գետնին չեն գցի, գետնին հացի պատառ տեսնեն, կառնեն կփշրեն, կղնեն քարին, որ թռչուններն ուտեն: Դացը մեղք է, հացը սուրբ է կասեն:

Աչքերդ առան երեսին, եթե աղջիկ է, այտերը որդան կարմիր կդառնան, եթե տղա է, կշփոթվի, աչքերդ գետնին կխոնարհի, կանցնի: Դետո հետ կդառնա կնայի:

Սիրելի՛, սիրելի՛ սիսիանցիներ, ինչքան բան ունի այս խառնիխուռն, այս ամբարտավան ժամանակների մարդը ձեզանից սովորելու: Ձեր չկորցրածը, ձեր պահպանածը նահապետականությունն է, ծիսական խեղճությունն է, հետամնացությունն է, այլ կատարյալ մարդկայնություն, որ մարդուն պետք է գալու ամենուր եւ ամեն օր, քանի կյանքը կա:

Ճակատը համբուրելի ժողովուրդ է Սիսիանի ժողովուրդը: Եվ ես շնորհակալ եմ ճակատագրից, որ այդ ժողովրդի գավակն են եւ նրա երագաշատ ապրումների թարգման բանաստեղծը:

ՀԱՍՏ ՍԱՀՅԱՆ



Ժամանակաշրջան

Զ՞ՆՏԱՑՈ՛՞Ն Ե՞՛Յ Ն՞. Ե՛՛Յ Կ՛՛Ց Կ՛՛Ց Ե՛՛Յ Կ՛՛Ց Ի՛՛Յ Կ՛՛Ց Ի՛՛Յ • Շ՞՛՛՛՛՛՛

Առաջնահերթ նպատակ ունենալով Սիսիանում արժանապատիվ ապրելակերպ ապահովելու եւ բարոյա-հոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծման խնդիրը, օժտված լինելով օրինակաւորությունը կյանքի կոչելու համարձակությամբ՝ պատրաստ եմ առողջ գաղափարներ պաշտպանող համակիր-գործընկերների հետ իրականացնել հետևյալ դրույթները.

- փոխել մարդկանց մեջ ծեւավորված պատիվ բարոյախոգեբանական կեցվածքը: Քաղաքում պետք է փոխադարձ հարգանքի, սիրո եւ փոխըմբռնման մթնոլորտ տիրի,

- բարելավել քաղաքատարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության կառույցների կառուցվածքը, բարձրացնել աշխատավարձի նվազագույն շեմը,
- քաղաքատարանի գործունեությունը կազմակերպել ՀՀ օրենսդրությանը համապատասխան, արդյունավետ եւ թափանցիկ՝ ապահովելով համայնքի բյուջեի դինամիկ աճ,
- քաղաքատարանի եւ համայնքի բնակչության մշտական կապն ապահովելու նպատակով ստեղծել հասարակական խորհուրդ՝ նրանում ընդգրկելով կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, տնտեսական եւ մտավորական գործիչների,
- միջոցներ գտնել բարելավելու զոհված եւ վիրավոր զինվորականների ընտանիքների բնակարանային պայմանները, կրկնապատկել քաղաքատարանի կողմից նրանց հատկացվող վճարների չափը,
- ուշադրության կենտրոնում պահել

- բանակում ծառայող սիսիանցիների եւ նրանց ընտանիքների խնդիրները,
- մշակել երիտասարդության հետ տարվող աշխատանքների համալիր ծրագիր, օժանդակել ազատ ժամանցի կազմակերպմանն ուղղված նախաձեռնություններին,
- իրականացնել բազմաբնակարան շենքերի մուտքի դռների տեղադրումը, տանիքների վերանորոգումը, քաղաքի ծայրամասային փողոցների ու բակերի սաֆալտապատումն ու լուսավորումը (Գայի, Սյունիքի, Երիտասարդական եւ այլ փողոցների), բարելավել քաղաքի սանիտարահիգիենիկ վիճակը, աղբահանությունը, ձեռք բերել ծյուն մաքրող, փողոց, մայթ ավազ փոքր մեխանիզմներ եւ մեքենաներ,
- ուշադրության կենտրոնում պահել համայնքի մարզական եւ մշակութային կյանքը: Ֆուտբոլի ֆեդերացիայի օժանդակությամբ վերակառուցել Սիսիանի մարզադաշտը, կահավորել խաղահրապարակները, կառուցել նորերը: Ձբաղվել քաղաքի վարչական

- տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությամբ,
- հետեւողականորեն պաշտպանել քաղաքի բնակչության օրինական շահերը՝ մասնավոր, մարզային, հանրապետական ենթակայության եւ այլ հիմնարկ-ձեռնարկությունների հետ ունեցած հարաբերություններում,
- համախմբել քաղաքում եւ այլ վայրերում բնակվող ու Սիսիանի զարգացման ճակատագրով մտահոգ սիսիանցիներին, միավորել նրանց ջանքերը քաղաքի կենսական խնդիրների լուծման գործում: Ստեղծել բարենպաստ պայմաններ գործարարների կողմից ներդրումային ծրագրերի իրականացման, աշխատատեղերի ստեղծման համար: Մեր երիտասարդներն իրենց վաղվա օրը պետք է տեսնեն Սիսիանում,
- պատասխանատվությամբ եւ արժանապատվորեն կատարել համայնքի ղեկավարի բոլոր պարտականությունները: